ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

155. Երկաթուղային կայարանաշենքերը պետք է հագեցած լինեն ուղևորների սպասարկման համար անհրաժեշտ օբյեկտներով, մասնավորապես՝ սպասասրահներ, տոմսերի վաճառքի կետեր, տեղեկատվական բյուրո, մոր և մանկան սենյակներ, ուղևորների բժշկական սպասարկման տարածքներ: Ուղևորներին տրամադրվում է սպասասրահներից և սանհանգույցներից անվճար օգտվելու իրավունք: Ենթակառուցվածքի կառավարիչը կապի ոլորտի կազմակերպություններին տրամադրում է ուղևորներին փոստային, հեռագրային և հեռախոսակապի ծառայությունների մատուցման համար տարածքներ, ինչպես նաև կազմակերպում է սննդի կետեր՝ պայմանագրերի հիման վրա: Երկաթուղային կայարանաշենքերը պետք է հագեցած լինեն այնպես, որ ապահովվի ~~հաշմանդամների~~հաշմանդամություն ունեցող անձանց -ազատ տեղաշարժը, երկաթուղային կայարանում առկա սպասարկման բոլոր կետերի հասանելիությունը: